

ԳԼՈՒԽԿՈՒՐՈՒԿ - ԽԱՂԵՐ

Ինչպես ընտրել գլուխկոտրուկ


Շատ երեխաներ սիրում են հանելուկներ լուծել ու «գլուխ ջարդել» բարդ առաջադրանքների վրա: Նման առաջադրանքներ կարող են դառնալ գլուխկոտրուկները: Այս խաղերը երկար ճանապարհներին հաճելի ուղեկից կլինեն. նրանց հետ երեխաները հաստատ չեն ծանծրանա:

Ինչպիսի՞ գլուխկոտրուկներ կան

Գլուխկոտրուկները մի քանի տեսակ են լինում:



Լարիիկնոս



Ռուբիկի խորանարդ



Մետաղալարե գլուխկոտրուկ

Լաբիրինթոս-գլուխկոտրուկները ճանապարհորդություն են խճճված գծերով, արահետներով, և կետից դեպի Բ գնալու քայլերով: Լաբիրինթոսները տարբեր տեսք ունեն. կարող է լինել հարթ մակերես՝ փորագրված քայլերով, գունդ՝ ոլորապտույտ թունելներով, խորանարդ, որի կողերի վրա պետք է գտնել ճիշտ մուտքը:

Փազլ-գլուխկոտրուկները սովորական փազլներին նման չեն: Սովորաբար սրանց դեպքում անհրաժեշտ է հավաքել երկրաչափական ֆիգուրներ ու արդյունքում ստանալ մեկ կոնստրուկցիա: Պատահում է, որ փազլն ասես լինի կոտրված իր և պետք է մանր կտորներից վերականգնել այդ իրը:

Ռուբիկի խորանարդը դասական գլուխկոտրուկ է, բայց սրա վրա կանգ առնել չարժե: Չէ՞ որ նույն մեթոդաբանությամբ աշխատող բազմաթիվ գլուխկոտրուկներ են ստեղծվել: Այս գլուխկոտրուկի նպատակը խորանարդի կողերից յուրաքանչյուրի վրա միայն մի գունդն հավաքելն է:

Շատ երեխաները նախընտրում են պարանից կամ մետաղալարերից լաբիրինթոսները: Որպես կանոն, այս գլուխկոտրուկների դետալները պետք է իրարից առանձնացնել առանց ուժ գործադրելու: Այս խաղերը կոմպակտ են և կարելի է վերցնել ցանկացած ճամփորդության ժամանակ:

Ինչպիսի ունակություններ են զարգացնում գլուխկոտրուկները

Երկրաչափական պատկերներ ուսումնասիրել կօգնեն փազլ-գլուխկոտրուկները, որոնց դեպքում պետք է տարբեր մեծության ու ձևի դետալներից ստանալ հապամապատասխան պատկերը:

Ռուբիկի խորանարդիկի ու նմանատիպ գլուխկոտրուկների միջոցով կարելի է զարգացնել մանր մոտորիկան ու ճկունությունը, երբ երեխան արդեն այնքան վարժ դա հավաքի, որ հասակակիցների հետ մրցի արագաշարժության մեջ: Նման գլուխկոտրուկները զարգացնում են նաև տրամաբանությունը. անհրաժեշտ է հասկանալ, թե քայլերի ո՞ր հաջորդականությունն արդյունքի կհանգեցնի:

Լաբիրինթոսները զարգացնում են երեխայի համբերատարությունն ու նստակյացությունը: Որպեսզի հաղթեն, անհրաժեշտ է գտնել ճիշտ քայլը, որը, երբեմն, այնքան էլ հեշտ չէ:

Ո՞ր տարիքի երեխաների կհետաքրքրեն գլուխկոտրուկները

Մինչև 3 տարեկան երեխաների համար առկա են պարզ գլուխկոտրուկներ, որոնց մեջ պետք է շարժել դետալը՝ տարբեր ուղղություններ քայլ կատարելու համար: Նրանց կհետաքրքրեն նաև խոշոր փազլ-գլուխկոտրուկները, որոնց օգնությամբ նրանք կծանոթանան երկրաչափական պատկերներին: Այս տարիքի համար հետաքրքիր գլուխկոտրուկներն են փայտի տարբեր չափերի խորանարդիկները, որոնց օգնությամբ պետք է բարձր աշտարակ կառուցել: Երեխան պետք է տրամաբանի, թե ի՞նչ հերթականությամբ դասավորի խորանարդիկները, որպեսզի ստանա հնարավորինս բարձր աշտարակ և այն շուտ փուլը չզա: 3-ից 6 տարեկան երեխաների համար նախատեսված գլուխկոտրուկները տարբերվում են «տրամաբանական բարդությամբ»: Այս տարիքի երեխաների համար կարելի է գնել փազլներ, լաբիրինթոսներ, իսկ նախադպրոցական տարիքում Ռուբիկի խորանարդիկ:

6 տարեկանից բարձր երեխաների համար կարելի է գնել բովանդակություն ունեցող խաղային հավաքածուներ, որոնց հիմքում

գլուխկոտրուկներ են: Դարոցականներին կհետաքրքրեն պարանից և մետաղալարերից գլուխկոտրուկները, Ռուբիկի խորանարդիկները, տարբեր բարդության լաբիրինթոսները:



ЦВЕТОВОЙ КОД

ИГРА-ГОЛОВОЛОМКА ДЛЯ 1 ИГРОКА



ЦВЕТОВОЙ КОД



5
100

ИГРА-ГОЛОВОЛОМКА
ДЛЯ 1 ИГРОКА



ЦВЕТОВОЙ КОД

5
и старше

1
игрок

от простых к сложным
100
заданий



BONDIBON

Взломайте цветовой код, слой за слоем!



Խաղը գնելուց առաջ չմոռանաք ստուգել գլուխկոտրուկի տարիքային շեմը: